ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԱԺԽՈ-006-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 104-րդ հոդվածի 3-րդ մասով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է.**

1. Ազգային ժողովի խորհրդի 2017 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքը և կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ ԱԺԽՈ-006-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված 2-րդ հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Փորձագիտական և վերլուծական վարչության օրենսդրական մոնիտորինգի և տեղեկատվական բաժինը վերանվանել «Փորձագիտական և վերլուծական վարչության հետազոտական և տեղեկատվական բաժին», իսկ նույն վարչության սոցիալ, կրթական, առողջապահական փորձաքննության բաժինը վերանվանել «Սոցիալական փորձաքննության բաժին»: Որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Փորձագիտական և վերլուծական վարչություն (պետահիրավական փորձաքննության բաժին, ֆինանսատնտեսագիտական փորձաքննության բաժին, սոցիալական փորձաքննության բաժին, հետազոտական և տեղեկատվական բաժին)»,
2) Քաղաքացիների ընդունելության և փաստաթղթաշրջանառության վարչության քաղաքացիների ընդունելության և նամակների բաժինը

բաժանման ձևով վերակազմակերպել քաղաքացիների ընդունելության և նամակների բաժնի և այցելությունների կազմակերպման բաժնի: Որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Քաղաքացիների ընդունելության և փաստաթղթաշրջանառության վարչություն (քաղաքացիների ընդունելության և նամակների բաժին, ընդհանուր բաժին և այցելությունների կազմակերպման բաժին)»:

2. Ի գիտություն ընդունել, որ կառուցվածքային փոփոխությունները ուղեկցվելու են հաստիքների փոփոխմամբ և կրճատմամբ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

2026 թվական, մարտի 23

Երևան

ԱԺԽՈ-017-Լ